ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 01/23

25.02.2023թ. ք. Երևան

Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար հարուցած կարգապահական վարույթի արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից 16.06.2022թ. կայացված և 23.06.2022թ. հրապարակված որոշմամբ դիմողի նկատմամբ կիրառված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և դրա հետ փոխկապակցված 151-րդ հոդվածի 3-րդ մասը, Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ հաստատված կարգի 93-րդ կետը, ինչպես նաև Վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանությունը որոշելու հարցով ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ:

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մայիսի 18-ին Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հանձնախումբը միջնորդություն է ներկայացրել Խորհրդին Ռուբեն Վարդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2022 թվականի հունիսի 9-ին Խորհուրդը Ռուբեն Վարդազարյանին կարգապահապան պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ միջնորդության քննության վերաբերյալ նշանակել է նիստ: Նիստը նշանակվել է 2022 թվականի հունիսի 16-ին:

Ռուբեն Վարդազարյանը նիստի մասին ծանուցվել է 2021 թվականի հունիսի 10-ին2021 թվականի հունիսի 10-ին Ռուբեն Վարդազարյանը փաստաբան Արամ Օրբելյանին լիազորել է ներկայացնելու իր շահերը:

Միջնորդության քննության համար նիստ նշանակելուց հետո Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Խորհրդի նիստը մեկ շաբաթով հետաձգելու համար՝ նկատի ունենալով, որ հունիսի 16-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում պետք է մասնակցեր ավելի վաղ՝ դեռևս մայիս ամսին, նշանակված երեք գործերով դատական նիստերին:

Խորհրդի կողմից 16.06.2022թ. կայացված և 23.06.2022թ. հրապարակված որոշմամբ Խորհրդի հանձնախմբի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Խորհրդի նախագահ (լիազորությունները կասեցված) Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ բավարարվել է: Մասնավորապես, Խորհուրդը որոշել է Խորհրդի անդամ (նախագահ), Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Վարդազարյանի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել: Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ կայացված վերոգրյալ Որոշմամբ Խորհուրդն արձանագրել է հետևյալը.

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, Բարձրագուն դատական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Բարձրագուն դատական խորհրդի աշխատակարգի 93-րդ կետի համաձայն՝

«93. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության փուլում Խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է Օրենքով, իսկ այն դեպքում, երբ կոնկրետ դատավարական գործընթաց կարգավորված չէ Օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով:»

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Կողմն իրավունք ունի դատարանում դատավարական գործողություններ կատարելու անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով:

2. Կողմը կարող է ինքնուրույն կատարել բոլոր դատավարական գործողությունները նաև այն ժամանակ երբ տվյալ գործը վարելու համար լիազորել է մեկ կամ մի քանի ներկայացուցչի:»

Օրենքի 151-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարույթ հարուցած մարմնի զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել, կամ նրա փաստաբանին: Բարձրագույն դատական խորհրդի անդամները և վարույթը հարուցած մարմնի ներկայացուցիչը կարող են հարցեր ուղղել դատավորին, որոնց դատավորը կարող է պատասխանել կամ հրաժարվել դրանց պատասխանելուց:

Այսպիսով, թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, և թե Օրենքի իրավակարգավորումներից բխում է, որ կարգապահական վարույթի քննության ժամանակ առաջնային սուբյեկտ է հանդես գալիս կողմը, ապա նոր վերջինիս

փաստաբանը կամ ներկայացուցիչը: Կողմն իրավունք ունի իր գործով ներգրավել ներկայացուցիչ, սակայն շարունակել ինքնուրույն կատարել բոլոր դատավարական գործողությունները: Փաստորեն, օրենսդրությունը կողմին իրավունք տալով դատավարությանը ներգրավել փաստաբանի, չի պայմանավորում կողմի իրավունքների իրացումը միմիայն փաստաբանի միջոցով: Տվյալ դեպքում կարևորվում է այն հանգամանքը, որ կարգապահական վարույթի շրջանակներում որպես կողմ հանդես է եկել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամ-նախագահը, ով ի տարբերություն մասնագիտական ունակություններով չօժտված անձանց, հանդիսանում է պրոֆեսիոնալ իրավաբան, Խորհրդի նախագահ և պարտավոր է բացարձակ տիրապետել Խորհրդում կարգապահական վարույթների քննության իրավակարգավորումներին: Վերջինիս կողմից խորհրդին պատասխան չներկայացնելը, նիստին չներկայանալը, նիստի հետաձգման վերաբերյալ միջնորդությունը չներկայացնելը, առանց իր փաստաբանի նիստին մասնակցելու անհամաձայնությունը չհայտնելը Բարձրագույն դատական խորհրդին տվել է բավական հիմքեր ենթադրելու, որ Ռ. Վարդազարյանն ուղղակի հրաժարվել է մասնակցել իր գործով քննվող կարգապահական վարույթին և բացակայում են այդ մասով բացառիկ հիմքերով նիստի հետաձգման պատճառները:

Ինչ վերաբերում է Ա. Օրբելյանի միջնորդությանը, ապա Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ վերոգրյալից ելնելով, այն է Ռ.Վարդազարյանի կողմից վերջինիս միջնորդությանը չմիանալով, առանց իր փաստաբանի ներկայության գործին ներկայանալու մասին կամահայտնության բացակայության պայմաններում, Ա. Օրբելյանի միջնորդությունը չի կարող դիտվել գործի հետաձգման բացառիկ հանգամանք, քանի որ Ռ. Վարդազարյանը, լինելով պրոֆեսիոնալ իրավաբան, առանց փաստաբանի էլ կարող էր մասնակցել քննվող նիստին, կարող էր ներգրավել այլ փաստաբան, քանզի 10.06.2022թ. Ա.Օրբելյանին լիազորագիր տալիս արդեն իսկ պարտավոր է եղել տեղյակ լինել իր գործով Խորհրդում 16.06.2022թ. նշանակված նիստի օրը վերջինիս մեկ այլ դատական նիստով զբաղվածության մասին:»

2. ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔԸ

ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:*

ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*

ՀՀ սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված*

դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով ***երաշխավորվում է*** *անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված* ***փաստաբանության գործունեությունը****: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:*

ՀՀ սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:*

ՀՀ սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:*

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի լսված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական պաշտպանության առանձնահատկություններին, նշել է, որ *«... իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև պրակտիկայում»* (İlhan v. Turkey [GC], no. 22277/93, § 97):

Դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործը, այդ թվում՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդների նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (Dombo Beheer B.V. v. the Netherlands judgment of 27 October 1993, §§ 32-33):

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքից հրաժարվելը պետք է հաստատվի աներկբայորեն (Neumeister v. Austria, 1936/63, judgment of 7 May 1974, p. 16, para. 36):

Դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 151-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ վարույթ հարուցած մարմնի զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել, կամ նրա փաստաբանին: Բարձրագույն դատական խորհրդի

անդամները և վարույթը հարուցած մարմնի ներկայացուցիչը կարող են հարցեր ուղղել դատավորին, որոնց դատավորը կարող է պատասխանել կամ հրաժարվել դրանց պատասխանելուց: Դատավորին կամ նրա փաստաբանին լսելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն անցնում է վարույթի նյութերի հետազոտմանը:

Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս վերջինիս իրավունքները և պարտականությունները սահմանելիս Օրենքը սահմանում է, որ դատավորն իրավունք ունի մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ, **ինչպես նաև փաստաբանի միջոցով** (Օրենքի153-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Բարձրագուն դատական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Բարձրագուն դատական խորհրդի աշխատակարգի 93-րդ կետի համաձայն՝

«93. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության փուլում Խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է Օրենքով, իսկ այն դեպքում, երբ կոնկրետ դատավարական գործընթաց կարգավորված չէ Օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով:»

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Կողմն իրավունք ունի դատարանում դատավարական գործողություններ կատարելու անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով:

2. Կողմը կարող է ինքնուրույն կատարել բոլոր դատավարական գործողությունները նաև այն ժամանակ, երբ տվյալ գործը վարելու համար լիազորել է մեկ կամ մի քանի ներկայացուցչի:»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2021 թվականի մարտի 31-ին ընդունված «Իրավական օգնության սխեմաների գործունակությունը և արդյունավետությունը քաղաքացիական և վարչական իրավունքի ոլորտներում» ուղեցույցի ընդհանուր սկզբունքների շարքում առանձնացվում է խտրականության արգելքի սկզբունքը, համաձայն որի իրավաբանական օգնությունը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր անձի՝ անկախ տարիքից, ռասայից, գույնից, սեռից, լեզվից, կրոնից կամ համոզմունքից, քաղաքական կամ այլ կարծիքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ունեցվածքից, քաղաքացիությունից կամ բնակության վայրից, ծնունդից, **<u>կրթությունից</u>** (*ընդգծումը մերն է*), սոցիալական կամ այլ կարգավիճակից: Հատուկ պաշտպանություն և օգնություն կարող է տրվել խոցելի մարդկանց:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2020 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունված «Փաստաբանի մասնագիտության իրականացման ազատության մասին» (2000)21 Հանձնարարականի Սկզբունք 1-ի 1-ին կետի համաձայն՝ բոլոր անհրաժեշտ միջոցները պետք է ձեռնարկվեն՝ հարգելու, պաշտպանելու և խթանելու փաստաբանի մասնագիտության ազատությունը՝ առանց խտրականության և առանց իշխանությունների կամ հանրության ոչ պատշաճ միջամտության, մասնավորապես՝

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

Նույն սկզբունքի 7-րդ կետի համաձայն փաստաբանները չպետք է զրկվեն դատարանների մատչելիությունից, որտեղ նրանք իրավասու են ներկայանալ, և նրանց պետք է հասանելի լինեն բոլոր համապատասխան փաստաթղթերը, երբ պաշտպանում են իրենց վստահորդների իրավունքները և շահերը՝ իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան:

3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ սահմանադրության 64-րդ հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սահմանադիրը իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակման որևէ հիմք կամ պայման չի նախատեսել: Ավելին, ՀՀ սահմանադրության 76-րդ հոդվածի շարադրանքից պարզ է դառնում, որ այդ իրավունքի ժամանակավոր կասեցում կամ լրացուցիչ սահմանափակում չի թույլատրվում նույնիսկ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ:

Իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը չի կարող ստորադասվել Օրենքի կարգավորումներին և անձը չի կարող զրկվել իրավաբանական օգնություն ստանալու իրավունից Օրենքի կարգավորումների և հատկապես Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)՝ դրանց տրված մեկնաբանությունների արդյունքում:

Քննարկվող իրավունքի պատշաճ իրացման համատեքստում պետք է նկատի ունենալ, որ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով ներկայացուցիչ կամ փաստաբան ընտրելիս անձը չի կարող և չպետք է կաշկանդված լինի նշանակված դատական նիստի օրը իր նախընտրած ներկայացուցչի կամ փաստաբանի՝ այլ գործերով զբաղվածությամբ և իր ընտրությունը պայմանավորի վերջինիս ազատ գրաֆիկով կամ հասանելիությամբ: Հակառակը, փաստաբանի ներկայացրած միջնորդության հիման վրա դատարանը պետք է և կարող է հետագծել դատական նիստի օրը՝ ապահովելով կողմի ներկայացուցչի կամ փաստաբանի մասնակցությունը՝ դրանով պայմաններ ստեղծելով անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման համար:

Դիմումատուի կողմից Բարձր դատարանի առաջ ըստ էության բարձրացվել են հետևյալ իրավական հարցերը.

- Արդյո՞ք Սահմանադրությունը երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալը և իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը եթե իրավաբանական օգնություն հայցողը ունի իրավաբանական գիտելիքներ (քննվող դեպքում՝ դատավոր է)
- Արդյո՞ք Սահմանադրությանը համահունչ է այնպիսի օրենսդրական կարգավորումը, որ նման իրավաբանական գիտելիքներ ունեցող անձի

փաստաբանի հարգելի բացակայությունը չի խոչնդոտում գործի հետագա քննությունը

- Արդյո՞ք Սահմանադրությանը համահունչ է օրենսդրական կարգավորումը առ այն, որ վստահորդը կրում է պատասխանատվություն՝ բացասական հետևանքներ այն դեպքերում, երբ փաստաբանը այլ դատական ծանրաբեռնվածության պատճառով չի կարողանում ներկա գտնվել դատական նիստին և այդ մասին նախապես ծանուցում է դատարանին
- Արդյո՞ք օրենսդրությամբ սահմանված կարգավորումների բացակայությունը, որոնք հնարավորություն կտան փաստաբանին առաջնահերթություն սահմանել իր երկու տարբեր գործերով ներկայացուցչության իրականացման համար, օրենսդրական բաց է և նման կարգավորումների բացակայությունը ի վնաս վստահորդի (և անուղղակի նաև ի վնաս փաստաբանի) մեկնաբանելը համահունչ է Սահմանադրությանը:

Մինչ վերոգրայլին անդրադառնալը անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթի շրջանակներում նիստը հետաձգելու վերաբերյալ փաստաբանի ներկայացրած միջնորդությունը չի կրել պարբերական բնույթ, այն ներկայացվել է եզակի դեպքում և խնդրանքը վերաբերել է Խորհրդում նիստը ընդամենը մեկ շաբաթով հետաձգելուն, ինչը չի խոչընդոտել և չէր էլ կարող խոչընդոտել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից Օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված եռամսյա ժամկետում քննելուն: Ավելին նման խնդիր Խորհուրդը չի բարձրացրել և ըստ էության փաստաբանի բացակայությունը համարել է հարգելի:

Նշվածի հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ դատական համակարգում ընդունված պրակտիկա է փաստաբանի մեկ այլ դատական գործի շրջանակներում արդեն իսկ նշանակված նիստի հիմնավորմամբ դատական նիստերի հետաձգումը, որը իհարկե պետք է ողջամտության շրջանակներում լինի և չկրի պարբերական բնույթ: Տվյալ դեպքում փաստաբանի կողմից Խորհրդին ներկայացված միջնորդությունից պարզ է դառնում, որ փաստաբանը Հայաստանի Հանրապետության հեռավոր մարզի դատարանում այդ օրը արդեն իսկ պետք է մասնակցեր 3 դատական գործերով նշանակված նիստերին: Անգամ եթե մի պահ ենթադրենք, որ Ռուբեն Վարդազարյանի ներկայացուցիչը կարող էր Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին տեղեկացնել, որ այդ օրը՝ 16.06.22թ. Խորհրդում պետք է մասնակցի Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության համար նշանակված նիստին և խնդրեր հետաձգել նշանակված դատական 3 նիստերը, ապա արդյոք սա անհարգալից վերաբերմունք չէր լինի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նկատմամբ: Չէ՞ որ մայիս ամսին Արամ Օրբելյանն արդեն տվել էր իր համաձայնությունը հունիսի 16-ին դատական նիստեր նշանակելու: Իհարկե, տեսադաշտից չպետք է դուրս թողնել նաև փաստաբանի

ծանրաբեռնվածությունը, ինչը ողջամտորեն կարող է ենթադրել տվյալ փաստաբանի՝ այլ դատական նիստերի շրջանակներում արդեն իսկ ներգրավվածություն: Այս հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս Խորհրդում կարգապահական վարույթի շրջանակներում ներգրավված դատավորի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի, եթե վերջինս որոշի օգտվել հենց այդ փաստաբանի ծառայություններից:

Այնուամենայնիվ, նման պայմաններում Խորհրդի որոշումը վկայում է այն մասին, որ փաստաբանի միջոցով հանդես գալու իրավունքը արձանագրող նորմը մեկնաբանվել է այնպես, որ փաստաբանի՝ հարգելի բացակայելու դեպքում գործի քննությունը կարող է շարունակվել և ավարտին հասնել, **եթե փաստաբանական օգնություն հայցող անձը ունի իրավաբանական գիտելիքներ (այսինքն՝ պայմանավորված անձի կրթությամբ)**:

Նշված նորմը՝ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 64-րդ հոդվածին և 29-րդ հոդվածին (անձնական և սոցիալական բնույթի այլ հանգամանքների՝ տվյալ դեպքում իրավաբան լինելու հիմքով կիրառվում է խտրականության):

Ավելին, չնայած ներկայացված նյութերից երևում է, որ ուղղակիորեն նման հարց բարձրացված չէ, կարծում ենք՝ սույն դեպքում անհրաժեշտ է քննարկել նաև **օրենսդրական բացի խնդիրը, քանզի դրա առկայության դեպքում բողոքում բարձրացված նորմերի հակասահմանադրականության խնդիրը ևս ի հայտ է գալիս:**

Այսպես, գործող օրենսդրությամբ առկա չէ ուղղակի կարգավորում, թե ինչպես պետք է փաստաբանը ընտրություն կատարի տարբեր վստահորդների նկատմամբ պարտականությունների կատարման միջև, երբ միևնույն օրը նշանակվում է մի քանի դատական նիստ և փաստաբանը չունի ֆիզիկական հնարավորություն մասնակցելու բոլոր նիստերին: Փաստացի խնդիրը լուծվել է ձևավորված պրակտիկայի միջոցով՝ նոր նիստ նշանակելիս կողմերի ներկայացուցիչների հետ համաձայնեցված կամ պաշտպանվող իրավունքի կարևորությունից ելնելով (օրինակ՝ առաջնահերթություն է տրվել այն նիստերին, որոնց ժամանակ քննարկվել է անձի ազատության հարց, օրինակ կալանքի կիրառում):

Դիտարկելով հարցը Խորհրդի տրված մեկնաբանության լույսի ներքո հանգում ենք նրան, որ առկա է օրենսդրական բաց: Նշված կարգավորման բացակայությունը փաստացի բերում է իրավիճակի, երբ **կարգավորման բացակայության պայմաններում անձը զրկվում է՝ Սահմանադրությամբ երաշխավորված պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունից:**

Նման կարգավորման բացակայության պայմաններում, փաստաբանի կողմից կատարվող ընտրությունը ի վնաս վստահորդի մեկնաբանելը՝ այն էլ այն պայմաններում, երբ փաստաբանի բացակայությունը համարվում է հարգելի, խնդրահարույց է Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության, 63-րդ հոդվածով նախատեսված արդար

դատաքննության իրավունքի և 79-րդ հոդվածով երաշխավորված որոշակիության սկզբունքների համատեքստում:

Այսպես, ստացվում է, որ օրենսդրական հստակ կանոնակարգումների բացակայության պայմաններում անձը զրկվում է պաշտպանությունից:

Նշվածը խնդրահարույց է նաև 64-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված երաշխիքի համատեքստում. Մի կողմից Սահմանադրությունը իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորում է Փաստաբանության գործունեությունը, մյուս կողմից օրենսդիրը նշված երաշխիքը ի չիք է դարձնում, քանի որ նախատեսում է փաստաբանի բացակայությունը հարգելի համարելու պայմաններում առանց ներկայացուցչի գործի քննություն և ավարտ: Նշված երաշխիքը քննարկվող փաստական հանգամանքների պայմաններում դառնում է ձևական և չի ապահովում անձի արդար դատաքննության իրավունքը և պատշաճ պաշտպանությունը:

Խորհրդի մեկնաբանությունն առ այն, որ *Օրենքի համաձայն Խորհուրդը նիստերը կարող է հետաձգել բացառիկ դեպքերում և Խորհրդի պրակտիկայում չի եղել դեպք, երբ Խորհրդի դատական նիստը կհետաձգվեր դատավորի ներկայացուցչի միջնորդությամբ՝ վերջինիս այլ դատական նիստերով ծանրաբեռնված լինելու հիմքով*, չի կարող դիտարկվել իբրև իրավաբանական օգնություն ստանալու անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման հիմք կամ պայման: Այս առումով հարկ է նշել, որ Խորհրդում դեռևս նման պրակտիկայի բացակայությունը չէր կարող բացառել հետագայում հակառակ նախադեպի հնարավորությունը:

Ավելին համապատասխան նորմերը՝ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ փաստացի ենթադրում են որոշակի դատական գործերի հիերարխիա, որը սակայն որոշակի չէ և սահմանված չէ օրենքով: Միաժամանակ Խորհուրդը անհարգելի չի համարել բացակայությունը, այլ նիստը չհետաձգելու հիմքում դրել է (փաստաբանի միջոցով կամ ինքնուրույն հանդես գալու իրավունք նախատեսող) նորմի այնպիսի մեկնաբանություն, որ կախված անձի կրթությունից և գիտելիքներից, փաստաբանի՝ բացակայությունը հարգելի համարելու և նիստը հետաձգելու միջնորդության հիման վրա փաստաբանի բացակայությունը հարգելի համարելով հանդերձ նիստը պետք է չհետաձգվի, քանի որ **վստահորդը**, ով ունի իրավական գիտելիքներ, ներկա չէ նիստին: Նման մեկնաբանությունը անհարկի միջամտություն է անկախ փաստաբանության գործունեությանը:

Ինչ վերաբերում է Օրենքի այն կարգավորմանը, համաձայն որի Խորհուրդը նիստերը կարող է հետաձգել **բացառիկ դեպքերում**, ապա կարծում ենք, որ դեպքի բացառիկությունը Խորհրդի կողմից պետք է գնահատվի հաշվի առնելով դրա նիստի արդյունքում ընդունվող որոշման կարևորությունը կամ նշանակությունը կարգապահական վարույթի շրջանակներում ներգրավված դատավորի համար:

Խորհրդի այն եզրահանգումը, որ *Խորհրդի նիստի անցկացման տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված Ռ. Վարդազարյանի կողմից Խորհրդին՝ նիստը հետաձգելու մասին միջնորդություն չներկայացնելը, ինչպես նաև որևէ կերպ իր*

ներկայացուցչի ներկայացրած միջնորդությանը չմիանալն իրենցից ներկայացնում են Ռ. Վարդազարյանի կողմից Խորհրդի նիստին անձամբ մասնակցելու, այն է լսվելու իրավունքից հրաժարում (waiver of a right) գործողության միջոցով, աղճատում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ներկայացուցչության ինստիտուտի էությունը և նսեմացնում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի բովանդակությունը, այն հաշվով, որ դատավարության շրջանակներում անձի իրավունքների պաշտպանությունը ստանձնած փաստաբանը հանդես է գալիս իր վստահորդի անունից, իսկ վերջինս կրում է իր ներկայացուցչի (փաստաբանի) գործողությունների ռիսկը:

Հետևաբար, փաստաբանի կողմից գործողության իրականացումը (տվյալ դեպքում Խորհրդի նիստը հետաձգելու միջնորդությունը), ներկայացուցչության տրամաբանությունից ելնելով, կարիք չուներ վստահորդի կողմից հաստատման և դրա իրավաբանական ազդեցությունը չէր կարող պայմանավորված լինել վստահորդի կողմից դրան միանալու կամ այն հաստատելու հանգամանքով: Ավելին, **իրավունքից հրաժարվելու** նորմերի նման մեկնաբանությունը, երբ առկա չէ աներկբա և միանշանակ արձանագրում, ավելին առկա է նիստին մասնակցելու ցանկությունը հավաստող փաստաբանի գրությունը, ուղղակիորեն խնդրահարույց է Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 64-րդ հոդվածների, ինչպես նաև 80-րդ հոդվածի (քանի որ ամբողջությամբ խեղաթյուրում և խախտում է նշված հոդվածներով նախատեսված հիմնական իրավունքների էությունը) կարգավորումների համատեքստում:

Կրկին անդրադառնալով Խորհրդի այն դիտարկմանը, որ *Ռ. Վարդազարյանը, լինելով պրոֆեսիոնալ իրավաբան, առանց փաստաբանի էլ կարող էր մասնակցել քննվող նիստին*՝ հարկ է նկատել, որ վարույթում ներգրավված դատավորը տարբեր պատճառներից ելներով կարող է չցանկանալ անձամբ կամ միայնակ հանդես գալ Խորհրդում իր վերաբերյալ հարուցված միջնորդության քննությանը և իրավաբանի մասնագիտության առկայությունը չի կարող նախապայման լինել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակման կամ միջամտության համար: Ավելին, Խորհրդում ձևավորված պրակտիկան ցույց է տալիս, որ Խորհրդում կարգապահական վարույթներին ներգրավված շատ դատավորներ նախընտրում են հարցի քննությունը մասնակցել ներկայացուցչի (փաստաբանի) հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և դրա հետ փոխկապակցված 151-րդ հոդվածի 3-րդ մասը, Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշմամբ հաստատված կարգի 93-րդ կետի, ինչպես նաև Վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ իրավակիրառ պրակտիկայում**

տրված մեկնաբանությամբ համապատասխանությունը Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասին խնդրահարույց է:

Համակարգող՝ *Ա.Ասատրյան*